

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Աշոտ Ղարաբյոզյան ՍՊԸ-ն ԷԱՃԱՊԶԲ-ԱԻՆ-23/76 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ճտքավոր կոշիկներ	ճտքավոր կոշիկներ	Աշոտ Ղարաբյոզյան ՍՊԸ	Խոշոր եղջերավոր անասունի հարթ (առանց նակատի), սև գույնի, առաջին կարգի կաշվից՝ մշակված անջրանցիկ ծածկույթով (արգելվում է օգտագործել սպիլով կամ խոզի կաշի): Կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճիտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից և տակացուկից: Ասեղնագործության տեսակը՝ լիցք, 3.5-4 կարակուլ/ սանտիմետրում: Կոշկերեսի և հետնամասի կաշին առնվազն 2 մմ հաստության, լեզվակից ճտքերին միացող հատվածը 1.5+/-0.2 մմ հաստության, իսկ ճտքերը ծալվածքով 2-2.5 մմ հաստության կաշվից, քթամասը և կրունկամասը՝ կոշտ: Քթամասում և կրունկամասում ներսից միջադրվում են թերմոպլաստ, որն ապահովում է մինչև 50 Զոուլ էներգիայով հարվածից պաշտպանվածություն: Հիմնական ներդիրը

բաղկացած է իրար սոսնձով կապակցված, առնվազն 2.8 մմ հաստության բնական հումքից, պաղոշից և կոշիկի համար նախատեսված 1.8 մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուլպինատոր: Կոշիկի երեսամասի ներսի հատվածը մշակվում է 240-245 գրամ մակերեսային խտությամբ 100 % բամբակ բաղադրությամբ կտորից: Կոշիկի հետևամասը երեսի կաշվից (ընդհանուր հետևամասի հաստությունը 2.5 մմ): Լեզվակը՝ փակ փականով: Կոշիկի ճտքերի բարձրությունը՝ 22+/-1 սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներսի մասով հիմնական ներդիրից մինչև ճտքի վերին եզրը: Տակացուն՝ միաշերտ, մաշվածադիմացկուն, յուղակայուն ռետինից՝ խիստ արտահայտված պահպանաշերտով, նախատեսված +/-50 °C պայմաններում կրելու համար: Տակացուի վրա առկա է դրոշմ յուղակայունության վերաբերյալ: Տակացուն միանում է կոշկերեսին՝ դառնալով մեկ ամբողջություն: Կոշիկը ոտքին հարմարեցվում է ճտքերի վրա ամրացված մետաղյա փոլակներով անցնող կոշկաքուղերով և ներսամասին մշակված N 5 տեսակի երկկողմանի շղթայով: Շղթան ողջ երկայնքով երկկողմանի մշակված է պաշտպանիչ փականներով: Կոշկաքուղերը քիմիական մանրաթելից արտադրված 4-5 մմ տրամագծով և 150-160 սմ երկարության քուղերով: Կոշիկի միջադիրը՝ ստելկան, առնվազն 3 մմ հաստության բնական նյութից՝ պաղոշից: Կոշիկը տակամասում ունի դրոշմ՝ վրան նշված չափսը, իսկ ճտքերի վրա նշված արտադրող կազմակերպության

				<p>անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Կոշիկի չափսերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Փաթեթավորումը՝ գործարանային, ստվարաթղթե արկղերով, պիտակավորված: Պիտակի վրա նշված են՝ տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը կներկայացնի նմուշներ, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը կներկայացնի մատակարարվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին լաբորատոր փորձաքննության եզրակացություն՝ տրված ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր փորձաքննական կենտրոնի կողմից: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: Ճտքավոր կոշիկի նմուշը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:</p>
--	--	--	--	---



## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО АШОТ КАРАГЕЗЯН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦПՁԲ-ԱԻԼ-23/76 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1	-	-	-	-